ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-21-7/5-2

ք. Երևան «22».06.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ազատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է <u>7 500 000</u> (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 157
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	"Արարատբանկ" ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00803554
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ս. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-7/5-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2. Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով (հատ): Բաճկոնի ներդիրը մշակվում է առնվազն 80 գ/մ² մակերեսային խտությամբ արհեստական անջրաթափանց գործվածքով, երկկողմանի մգդակարված 300 գ/մ², իսկ թևքերի ներդիրը՝ նույնպես, առնվազն 80 գ/մ² մակերեսային խտությամբ արհեստական անջրաթափանց գործվածքով, երկկողմանի մգդակարված 200 գ/մ² մակերեսային խտությամբ սինտեպոնով:

Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարի լայնությունը 0.6 սմ: Առաջամասերում գոտկատեղի ստորին կարի եզրից 8.0-10 սմ հեռավորության վրա մշակված են վրադիր, թեք շերտիկավոր կողային գրպաններ որոնք կոճկվում են գաղտնի կոճկվածքով և կայծակ շղթայով: Գրպանների ներսամասը մշակվում է սև կամ մուգ գույնի, ոչ պակաս քան 140 գրամ մակերեսային խտության, ֆլիզե կամ համարժեք գործվացքից: Բաճկոնի թևքերը՝ ներկարված:

Բաճկոնը կոճկվում է գաղտնի կոճկվածքով՝ կայծակ շղթայով և 6 հատ 17-20 մմ տրամագծով կոճակներով: Բաճկոնի ներսամասը՝ գոտկատեղի ուղղությամբ մշակված է կարգավորող քուղով:

Բաճկոնի արտաքին մասում՝ կրծքամասի աջ և ձախ հատվածներում՝ կարգավորող քուղի վերին եզրակարից 5.0-6.0 սմ բարձրության վրա մշակված են 15.5-16.5 սմ կողմով՝ կափույրով վրադիր քառակուսի գրպաններ որոնց վրա՝ կենտրոնում, վերեվից ներքև մշակված են 4.0 սմ լայնության երեսացուի գործվածքից վրադիր գոտիներ: Կափույրների լայնությունը՝ 5.5-6.0 սմ: Կափույրների վերին եզրակարով մշակված են 13 սմ երկարության և 3.0 սմ լայնության կպչուն ժապավեններ՝ կրծքանշանների փակցման համար: Բաճկոնի ուսամասերում մշակված են 4.8-4.9 սմ լայնության և առնվազն 12-14 սմ (կախված բաճկոնի չափսերից) երկարության ախլակներ, որոնք կոճկվում են 14-16 մմ տրամագծի կոճակներով:

Բաճկոնի ներսամասը ամբողջությամբ՝ մինչև կարգավորող քուղի եզրակարից 16-17 սմ հեռավորության վրա մշակված է ոչ պակաս քան 12 մմ մորթախավի բարձրությամբ բնական մորթուց, որը կոճկվում է բաճկոնին եզրակարերով մշակված կայծակ շղթայով:

Բաճկոնի և թևքերի ստորին եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ բաճկոնինը՝ 2.0-2.5 սմ, իսկ թևքերինը՝ 1.5-2.0 սմ: Թևքերի բազկային հատվածում՝ ստորին եզրից 2.5-3.0 սմ բարձրության վրա մշակված են 5.0-5.5 սմ լայնության՝ էլաստիկ ժապավենով ձգվող պատաներ, որոնք կոճկվում են մեկ փակօղակով և 2 հատ՝ իրարից 6.0-7.0 սմ հեռավորության վրա կարված 14-16 մմ տրամագծի կոճակներով:

Վզատեղը մշակված է օձիքով: Օձիքը ունի կտրած կանգունակ: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնին ներդրվում է հանովի մորթե օձիք, որը կոճկվում է բաճկոնին, լրացուցիչ շերտին մշակված 5 հատ օղակներով և բաճկոնի վզատեղում զուգահեռ կարված 5 հատ 14-16 մմ տրամագծի կոճակներով: Օձիքի մորթախավի բարձրությունը՝ 12 մմ ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով: Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է շերտիկով ծոցագրպան, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով:

Օգտագործվող բոլոր կոճակները պետք է լինեն ջերմակայուն և հղկված կողամասերով:

Վճարովի ծառայությունների համար պատվիրատուի կողմից ըստ ապրանքատեսակների տրամադրվող նյութերի.

ՑԱՆԿ

	Ապրանքատեսակը	Տրամադրվող նյութերը	Ծախսը մեկ միավորի համար
1.	Կոստյում ձմեռային դաշտային	Երեսացուի գործվածք	1,5 լայնքով 2.7 գ/մ կամ 4,05մ²

Ծանոթություն.

1. Պայմանագիրը կնքելուց հետո՝ 10 օրյա ժամկետում, պատասխանատու ստորաբաժանման կողմից մատակարար կազմակերպությանը և զորամասերին է ներկայացվում քանակային տվյալները ըստ զորամասերի:

2. Զորամասի կողմից տրված օրդերի հիման վրա զինծառայողը սահմանված ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ չափս-հասակային տվյալները ներկայացնելու համար պետք է ներկայանա համապատասխան մատակարար կազմակերպություն:

3. Համազգեստը պատրաստելուց հետո դրա մասին մատակարար կազմակերպությունը տեղեկացնում է զորամասին:

4. Զինծառայողների կողմից սահմանված ժամկետում մատակարար կազմակերպություն չներկայանալու դեպքում, պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված չափս- հասակային տվյալների հիման վրա մատակարար կազմակերպությունը պատրաստի արտադրանքը պետք է մատակարարի իրային կենտրոնական բազա (ք. Երևան արցախի 61 հասցեով):

4. Կոստյում՝ կիսաբրդյա, տոնական սպայական /անհատական պատվեր/ (լրակազմ) ТУ 858-5300-2005 կամ համարժեք: Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատթող տաբատից:

Կիտելը բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կոճկվում են չորս, ՀՀ ՋՈՒ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական ՀՀ ՋՈՒ զինաշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված: Աստառը՝ ГОUS-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գործվածք: Ձախ լանջափեշին մշակվում է կտրվածքով ծոցագրպան:

Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին մշակվում է 7 կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Կողային կարերում անցկացվում է 1.5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր գույնի մահուդից կամ համարժեք երիզներ, (ավիացիայի և օդադեսանտային զորքերի համար երկնագույն երիզով): Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ГОUS-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գործվածքից աստառով:

Պատվիրատուի կողմից տրամադրվում են՝ երեսացուի գործվածք, կարմիր մահուդ, կոճակներ 22մմ և 14մմ ոսկեգույն ՀՀ ՋՈՒ զինանշանով, ուսադիրներ, աստղեր ոսկեգույն, թևքանշան, էմբլեմա: Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

պատվիրատուի կողմից տրամադրվող նյութերի

ՑԱՆԿ

հ/հ	Ապրանքատեսակ	Տրամադրվող նյութերը	Ծախսը միավորի համար
1.	Կոստյում կիսաբրդյա՝ տոնական սպայական (անհատական պատվեր)	1. երեսացուի գործվածք 2. կարմիր մահուդ 3. կոճակ 22մմ ոսկեգույն 4. կոճակ 14մմ ոսկեգույն 5. ուսադիրներ 6. աստղեր ոսկեգույն 7. թևքանշան 8.էմբլեմա	1. 1.5 լայնքով 3.00գ/մ կամ 4.5 մ^2 2. 1.5 լայնքով 0.035գ/մ 3. 4 հատ 4. 4 հատ 5. 1 զույգ, ըստ կոչման 6. ըստ կոչման 7. 2 հատ 8.2 հատ

Ծանոթություն.

1. Պայմանագիրը կնքելուց հետո՝ 10 օրյա ժամկետում, պատասխանատու ստորաբաժանման կողմից մատակարար կազմակերպությանը և զորամասերին է ներկայացվում քանակային տվյալները ըստ զորամասերի:

2. Զորամասի կողմից տրված օրդերի հիման վրա զինծառայողը սահմանված ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ չափս-հասակային տվյալները ներկայացնելու համար պետք է ներկայանա համապատասխան մատակարար կազմակերպություն:

3. Համազգեստը պատրաստելուց հետո դրա մասին մատակարար կազմակերպությունը տեղեկացնում է զորամասին:

4. Զինծառայողների կողմից սահմանված ժամկետում մատակարար կազմակերպություն չներկայանալու դեպքում, պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված չափս- հասակային տվյալների հիման վրա մատակարար կազմակերպությունը պատրաստի արտադրանքը պետք է մատակարարի իրային կենտրոնական բազա (ք. Երևան արցախի 61 հասցեով):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ս. ԱԶԱՏՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 31.10.2021թ.
2	դերձակի ծառայություններ	դրամ	1			
	/Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով/	հատ	20	60000	1200000	20
4	դերձակի ծառայություններ	դրամ	1			
	/Կոստյում՝ տոնական, կիսաբրդյա սպայական (անհատական պատվեր)/	լ-կ	350	18000	6300000	350

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-7/5-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ, ընդ որում՝
			4-րդ եռամսյակ
2	դերձակի ծառայություններ /Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով/	98391120/32	1200000
4	դերձակի ծառայություններ /Կոստյում՝ տոնական, կիսաբրդյա սպայական (անհատական պատվեր)/	98391120/7	6300000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ս. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-21-7/5-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀՄՁԲ-21-7/5-2 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն